ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"..04." ....Նոյեմբեր..... 2025թ. N.....381-Լ.....

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1587-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի 9-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով 2024 թվականի դեկտեմբերի 20-ին կայացած Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության մրցութային հանձնաժողովի գնահատման ամփոփ-թերթիկը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության 2025 թվականի փետրվարի 24-ին կայացած մրցույթի արդյունքները՝ ըստ գնահատման ամփոփ-թերթիկի:

2. «Երևան-Թեհրան» միջպետական երթուղու սպասարկման համար 65 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Անար» ՍՊ ընկերությանը՝ «Նեոպլան» մակնիշի 366 AT 61, 881 FF 88 և «Մերսեդես Բենց» 881 DD 88 հաշվառման համարանիշների տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման չորս տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 25000 դրամ փոխադրավարձով:

3. «Երևան-Բագրատաշեն-Թբիլիսի» միջպետական երթուղու սպասարկման համար 62 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Երկու Ընկեր» ՍՊ ընկերությանը՝ «Հյունդաի» մակնիշի 50 II 553, 50 OQ 553 հաշվառման համարանիշների տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 8000 դրամ փոխադրավարձով:

4. «Երևան-Թավրիզ» միջպետական երթուղու սպասարկման համար 53,33 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Գոլդենթրի» ՍՊ

ընկերությանը՝ «Մերսեդես Բենց» մակնիշի 080 VP 01 , 68 SD 068 և «Նեոպլան» 37 BQ 916 հաշվառման համարանիշների տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 18000 դրամ փոխադրավարձով:

5. «Երևան-Մոսկվա» միջպետական երթուղու սպասարկման համար 72.7 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Պեգաս Տրանս» ՍՊ ընկերությանը՝ «Նեոպլան» մակնիշի 10 FU 055, 10 FD 055 և «Մերսեդես Բենց» 85 ML 505 հաշվառման համարանիշների տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման հինգ տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 30000 դրամ փոխադրավարձով:

6. Ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետին՝ ապահովել հաղթող կազմակերպության մրցույթի արդյունքների վերաբերյալ իրազեկումը:

7. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

3/4/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք.Երևան

Ձև № 7

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
<< 04>> մարտի 2025թ.
N 381-Ա հրամանի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ-ԹԵՐԹԻԿ

24 փետրվարի 2025թ
(մրցույթի անցկացման օրը)

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	Գումարային գնահատականը			
	Ներկայացված ավտոբուսների	վարորդների աշխատանքային փորձի	խախտումների առկայության	ընդամենը
«Անար» ՍՊԸ	*«Երևան -Թեհրան»*			
	37	8	20	65
«Երկու Ընկեր» ՍՊԸ	*«Երևան-Բագրատաշեն-Թբիլիսի»*			
	32	10	20	62
«Գոլդենթրի» ՍՊԸ	*«Երևան-Թավրիզ»*			
	27,33	6	20	53,33
«Պեգաս Տրանս» ՍՊԸ	*«Երևան -Մոսկվա»*			
	47	5.7	20	72.7

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ _____ / Խաչիկ Սողոմոնյան
(ստորագրությունը) (անունը,ազգանունը)